Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 2-ի N 803-Լ որոշման

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» N 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը մշակել է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման վերաբերյալ գործողությունների ազգային երկրորդ ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ դրանով իսկ վերահաստատելով իր պատրաստակամությունը շարունակելու աշխատանքները կանայք, խաղաղություն և անվտանգություն թեմայով: Ծրագիրը հիմնված է նախորդ գործողությունների ազգային ծրագրի վերլուծության վրա և հաշվի է առնում ձեռքբերումներն ու քաղած դասերը:

Ծրագիրն անդրադառնում է 2020 թվականի աշնանը Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմի արդյունքում Արցախից տեղահանված, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջանների կանանց և աղջիկների առջև ծառացած խնդիրներին ու մարտահրավերներին: Ագրեսիվ պատերազմի արդյունքում զոհվել է 80-ից ավելի քաղաքացիական անձ, նրանցից 12-ը կանայք են, ընդ որում, նրանց մեծամասնությունը կազմում են տարեցները:

Ագրեսիվ պատերազմի արդյունքում բռնի տեղահանվեց և Հայաստանում ապաստան ստացավ 91.000-ից ավելի մարդ, նրանց 88 տոկոսը կանայք և երեխաներ էին: Ուժի կիրառումը իր բացասական ազդեցությունն ունեցավ տարածաշրջանային կայունության վրա, վտանգվեցին հարյուր հազարավոր մարդկանց կյանքերն ու առողջությունը:

Ագրեսիվ պատերազմը սկսվել և ընթացել է COVID-19 համավարակի պայմաններում՝ դրանով իսկ ավելի բարդացնելով կանանց և աղջիկների ծանր իրավիճակը:

Այսպիսով, ծրագիրը ներկայացնում է ճգնաժամային իրավիճակում հայտնված կանանց և աղջիկների խնդիրները՝ անդրադառնալով դրանց անվտանգային բաղադրիչին: Ծրագրում առանձին մատնանշվում են բռնի տեղահանված կանանց խնդիրները և նոր սահմանային իրավիճակի արդյունքում ստեղծված անվտանգային մարտահրավերներն ու դրանց ազդեցությունը կանանց և աղջիկների վրա: Ծրագիրը կարևորվում է կանանց մասնակցությունը պաշտպանության համակարգում, ընդգծում է տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավման անհրաժեշտությունը՝ տեղերում ապահովելու համար ծրագրի դրույթների արդյունավետ իրականացումը:

Ծրագիրն ընդգրկում է երեք տարվա ժամանակահատված և, լինելով կենսունակ փաստաթուղթ, հնարավորություն ունի իրավիճակին համահունչ լինելու նպատակով վերանայվել կամ վերախմբագրվել:

Ծրագիրը գրվել է ներառական մասնակցության սկզբունքով: Մասնավորապես՝ դրա մշակման գործընթացում, բացի պետական կառույցներից, ներգրավված են եղել հասարակական կազմակերպություններն ու պատերազմի ազդեցությունը կրած կանայք, այդ թվում՝ Արցախից տեղահանվածները:

Ծրագիրը վերահաստատում է երկրի ներսում տարբեր կառույցների միջև, ինչպես նաև միջազգային համագործակցության անհրաժեշտությունը: Այսպես, հիմնվելով «Մասնակցություն», «Պաշտպանություն», «Կանխարգելում», «Վերականգնում ու օժանդակություն» Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի հիմնական սյուների

վրա, Հայաստանի 2022-2024 թթ. գործողությունների ազգային ծրագրում ավելանում է նոր՝ համագործակցություն առանձին ուղղությունը: Ծրագիրը սահմանում է մոնիթորինգի նոր ռազմավարություն և առաջարկում է այնպիսի մեխանիզմ, որը կարող է լավագույնս գնահատել դրա իրականացման արդյունավետությունը:

Ծրագիրը համահունչ է կանանց առաջխաղացման և գենդերային հավասարության հարցերով Հայաստանի այլ ռազմավարությունների հետ, ինչը թույլ է տալիս ճիշտ հաշվարկել և օգտագործել հնարավոր մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Ծրագրում հաշվի են առնվել Հայաստանի կողմից կանանց իրավունքների և գենդերային հավասարության հարցերով ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի, Պեկինի հռչակագրի և գործողությունների ծրագրի, 2030 կայուն զարգացման նպատակների, Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացի և այլ շրջանակում:

Հայաստանը Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի դրույթների իրականացումը որպես կարևոր խնդիր ընդգրկել է նաև Մարդու իրավունքների խորհրդում 2020-2022 թթ. իր անդամակցության գերակայությունների ցանկում:

Լինելով զանգվածային ոճրագործությունների դեմ պայքարող երկիր՝ Հայաստանը նշված ծրագրում մեծ նշանակություն է տալիս կանանց և աղջիկների դերակատարությանը ցեղասպանությունների կանխարգելման համատեքստում:

Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձևը շեշտում է. «բոլոր պետությունների պատասխանատվությունը՝ վերջ դնելու անպատժելիությանը և քրեական պատասխանատվության ենթարկելու ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների համար, ներառյալ նրանց, ովքեր կանանց և աղջիկների նկատմամբ իրականացրել են սեռական և այլ բռնություններ և ընդգծում է, որ հնարավորության դեպքում, այս հանցագործությունները պետք է բացառվեն համաներման դրույթներից»:

2. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» N 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. Մասնակցություն (Participation)

NN ը/կ	**Նպատակը**	**Միջոցառումները**	**Արդյունքային ցուցանիշները**	**Կատարման ժամկետները**	**Պատասխանատու կատարողները**	**Համակատա-ողները**	**Ֆինանսավոր-ման աղբյուրները**
1.	Զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում կանանց ներգրավմանն ուղղված քաղաքակա-նության խթանում	Իրազեկվածու-թյան բարձրացում զինված ուժերում ծառայող կանանց դերի վերաբերյալ	Պաշտպանու-թյան ոլորտի քաղաքականու-թյան մշակման գործընթացնե-րում կանանց ներգրավվա-ծության խթան-ման համար համապատաս-խան մեխա-նիզմների ներդրում ՀՀ ռազմական ուսումնական հաստատու-թյուններում կին դիմորդների թվի ավելացում	2022-2024	ՀՀ պաշտպա-նության նախարարություն	Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպու-թյուններ, շահագրգիռ երկրներ, հասարակական կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2.	Ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության և առաջխաղացման խթանում	Ոստիկանության ակադեմիայում կին դիմորդների և դասախոսների ներգրավվածության ընդլայնում: Ոստիկանության համակարգում որոշում կայացնողների իրազեկում, կանանց հիմնահարցերի և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ	Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների, այդ թվում՝ դասընթացների թվի ավելացում	2022-2024	ՀՀ ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.	Ապահովել սահմանամերձ շրջանների կանանց (այդ թվում՝ անվտանգային նոր իրավիճակում գտնվող) և բռնի տեղահանված կանանց ներգրավվածությունը անվտանգային հարցերի քննարկմանը	Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը և համայնքային զարգացման ծրագրերի մշակմանը կանանց ներգրավվածության և մասնակցության ապահովում	Համայնքներում ավագանիների կին անդամների համար անվտանգային հարցերով քննարկումների և դասընթացների թվի ավելացում Կանանց անվտանգային կարիքների	2022-2024	Սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ	ՀՀ պետական կառավարման այլ մարմիններ Հայկական կարմիր խաչի ընկերություն (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Կանանց անվտան-գային կարիքների գնահատում Հասարակական կազմակերպու-թյունների, այդ թվում՝ կանանց ռեսուրս կենտրոն-ների ծրագրերում անվտանգային բաղադրիչի ներառում	գնահատման արդյունքների արտացոլում ՀՀ բոլոր ռազմա-վարություն-ներում			պություններ (համաձայնությամբ)	
4.	Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության ազգային և համայնքային ծրագրերի մշակման և որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության ապահովում	Կլիմայի փոփոխու-թյանն առավել խոցելի տնտե-սական ոլորտների և համայնքների նույնականացում և ծրագրերի մշակում՝ կանանց մասնա-գիտական և հասարակական խմբերի ներգրավմամբ	Համապատաս-խան ոլորտների վերաբերյալ ազգային և համայնքային ծրագրերում կանանց մաս-նակցության հավասար հնարավո-րությունների ապահովում	2022-2024	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (համաձայնությամբ) Միջազգային այլ կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպու-թյունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

5.	Սահմանամերձ համայնք-ներում ճգնաժամային իրավիճակները հաղթահարելու կանանց պատրաստվածության բարձրացում	Սահմանամերձ համայնքներում ճգնաժամային իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիա-կան պաշտպա-նության հարցերով ուսուցման կազմակերպում	Ուսումնական վարժություն-ներում կանանց թվի ավելացման ապահովում	2022-2024	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Հայկական կարմիր խաչի ընկերություն (համաձայնությամբ) Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ) Այլ միջազգային կազմակերպու-թյուններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
6.	Պաշտպանության համակարգում կանանց դերի կարևորության մասին իրազեկում	Պաշտպանության համակարգում կանանց դերի վերաբերյալ հասարակության տարբեր շրջանակ-ների հետ հանդի-պումների, համա-ժողովների կազմա-կերպում, այդ թվում՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ	Իրազեկվածու-թյան բարձրա-ցում կանայք և անվտանգու-թյուն թեմայով	2022-2024	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարա-րություն	Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Միջազգային կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2. Պաշտպանություն (Protection)

NN ը/կ	Նպատակը	Միջոցառումները	Արդյունքային ցուցանիշները	Կատարման ժամկետ-ները	Պատասխանատու կատարողները	Համակատարողները	Ֆինանսա-վորման աղբյուրները
7.	Հակամարտությունների ժամանակ բռնությունից տուժած կանանց և աղջիկների պաշտպա-նության ապահովում	Տեղահանման և տեղավորման պատասխանատու մարմինների աշխատակիցների կարողությունների հզորացում գենդե-րազգայունության բարձրացում Իրավապահ մարմինների, դատավորների վերապատրաս-տում Բռնությունից, այդ թվում սեռական բռնությունից տուժած կանանց ուղղորդման մեխանիզմների բարելավում, միջազգային լավագույն փորձի տեղայնացում	Ըստ անհրաժեշ-տության հետա-զոտական աշխատանք-ների իրակա-նացում Դասընթաց-ների կազմա-կերպում և իրա-զեկվածության բարձրացում (տուժողների իրավունքների պաշտպանու-թյան և ազդա-բարման մեխա-նիզմներ) 1 տարվա ընթացքում մոտ 100 դատա-վորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված	2022-2024	ՀՀ ոստիկանություն Արդարադա-տության ակադեմիա (համաձայնությամբ)	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հայկական կարմիր խաչի ընկերություն (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպու-թյունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպու-թյունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			անձանց և մոտ 250 դատախազի և դատախազի թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում			Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	
8.	Կանանց և աղջիկների հատուկ պաշտպանության ապահովում պատերազմների, արտակարգ իրավիճակների և համաճարակների դեպքում	Սահմանամերձ բնակավայրերում ապաստարանների կառուցում և առկա ապաստարանների հարմարեցում՝ հիմք ընդունելով գենդերային առանձնահատկություններին առնչվող չափորոշիչները COVID-19 համավարակով պայմանավորված արձագանքման մեխանիզմների ներդրման կիրառման ընթացքում գենդերային զգայունության ապահովում	Ապաստարանների թվի ավելացում և որակի բարելավում Քաղաքացիական պաշտպանության դասընթացների առկայություն՝ հաշվի առնելով գենդերային առանձնահատկությունները	2022-2024	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե Միջազգային կազմակերպություններ շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

9.	Սահմանամերձ բնակավայրերում տեղաբաշխված զորամասերի զինծառայողների կանանց սոցիալական ադապտացմանը (հարմարմանը) աջակցում	Համագործակցություն ներպետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ զինծառայողների կանանց սոցիալական ինտեգրումն ապահովելու հարցերում	Զինծառայողների կանանց զբաղվածությունն ապահովելու նպատակով՝ մասնագիտական դասընթացների անցկացում	2022-2024	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ պաշտպանության նախարարություն	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
10.	Դասընթացների անցկացում, որոնք ուղղված են արտակարգ իրավիճակներում և/կամ պատերազմի ժամանակ առաջին օգնության ցուցաբերման հմտությունների զարգացմանը (հատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ շրջանների և տեղահանված կանանց	Ապահովել համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ	Առաջին օգնության ցուցաբերման դասընթացների թվի ավելացում կանանց և աղջիկների համար	2022-2024	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն Հայկական կարմիր խաչ ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

3. Կանխարգելում (Prevention)

NN ը/կ	Նպատակը	Միջոցառումները	Արդյունքային ցուցանիշը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողները	Համակատարողները	Ֆինանսա-վորման աղբյուրները
11.	Կանանց և աղջիկների մասնակցություն ցեղասպանությունների, մարդկության դեմ գործած հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործողություններում	Քաղաքացիական անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների նորմերի խախտմանը (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հանդեպ 2020 թվականի ագրեսիայի արդյունքում) վերաբերող գործերի ուսումնասիրում, հավաքագրում և դրանց վերաբերյալ իրազեկում Ցեղասպանության կանխարգելման ուղղությամբ ՀՀ կատարված	Ուսուցողական նյութերի մշակում և տարածում Ցեղասպանության կանխարգելման թեմայով Հայաստանի կողմից միջազգային ասպարեզում կատարվող աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն	2022-2024	ՀՀ արտաքին գործերի նախարարություն Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակ	ՀՀ պաշտպանության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություններ շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		աշխատանքների ուսումնասիրում Հատուկ ուսուցման կազմակերպում խաղաղապահ ուժերի և ռազմա-կան ոստիկանու-թյան անձնա-կազմի համար					
12.	Կանանց, անվտան-գության և խաղաղու-թյան թեմաներով իրազեկվածության բարձրացում և հմտությունների զարգացում	Միավորված ազգերի կազմա-կերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրազեկ-վածության բարձ-րացում և հարա-կից բանաձևերի թարգմանություն ու տարածում 1325 բանաձևի երկրորդ ազգային ծրագրի թարգ-մանություն անգլերեն	Իրազեկման արշավներում և հմտությունների զարգացման դասընթացնե-րում կանանց թվի ավելացում Կանանց իրավունքներին վերաբերող հայերեն լեզվով ուսումնական նյութերի նախա-պատրաստում	2022-2024	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ արդարադատու-թյան նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն	Միջազգային կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Պետական բյուջե Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Կանանց իրա- վունքներին վերա- բերող միջազգա- յին փաստա- թղթերի լայն իրազեկման ապահովում					
13.	Կրթական կարողու- թյունների զարգացում, 1325 բանաձևի վերա- բերյալ տեղեկատվու- թյան ներառում կրթա- կան ծրագրերում	Բարձրագույն ուսումնական հաստատություն- ների ուսումնական ծրագրերում ներառել պաշտպանության համակարգում կամ դրա հետ կապված ոլորտ- ներում կանանց իրավունքների պաշտպանության, հավասար հնարա- վորությունների ապահովման թեմաներով դասընթացներ Ուսուցիչների վերապատրաստ- ման դասընթաց- ների մոդուլներում	ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատու- թյունների ծրագրերում համապատաս- խան դասըն- թացների, ուսումնական նյութերի և դասախոսու- թյունների առկայություն Ռազմական բուհերի ուսում- նական ծրագրե- րում համապա- տասխան դասընթացների, ուսումնական նյութերի և	2022-2024	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Միջազգային կազմակեր- պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր- պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր- պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր- պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		իրազեկող նյութերի ներառում	դասախոսությունների առկայություն Ուսուցիչների և պրոֆեսորա-դասախոսական կազմի վերապատրաստման դասընթացների մոդուլներում իրազեկող նյութերի առկայություն Մանկավարժական կազմի վերապատրաստման դասընթացների ծրագրերում իրազեկող նյութերի առկայություն				
14.	Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության (ԶՔԳՎ) և զինդատախազության աշխատողների իրազեկվածության	Անվտանգության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով սեմինար-դասընթաց	Զինվորական իրավապահ մարմիններում իրազեկվածության վերաբերյալ սեմինար-	2022-2024	ՀՀ քննչական կոմիտե ՀՀ գլխավոր դատախազություն	Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպու-	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-

	բարձրացում անվտան-գության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ	թացների կազմա-կերպում՝ Քննչա-կան կոմիտեի և զինդատախա-զության ներկա-յացուցիչների համար	դասընթացների թվի ավելացում		ՀՀ արդարադատու-թյան ակադեմիա	թյուններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
15.	Կիբեռանվտանգության ծրագրերում կանանց ակտիվությանն ուղղված միջոցառումների իրա-կանացում թվային լուծումների նկատմամբ վստահության ամրապնդում	Ստեղծել ազգային կիբեռանվտան-գության գերա-զանցության կենտրոն	Կիբեռգրագի-տության զար-գացում, կիբեռ-հանցագործու-թյունների դեմ պայքարի բարձ-րացում, անձնա-կան տվյալների պաշտպանու-թյուն՝ հաշվի առնելով կանանց հատուկ խնդիր-ները	2022-2024	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբե-րության նախարարություն	Միջազգային կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4. Օժանդակություն և վերականգնում (Relief and recovery)

NN ը/կ	Նպատակը	Միջոցառումները	Արդյունքային ցուցանիշը	Կատարման ժամկետները	Պատասխա-նատու կատարողները	Համակատարող-ները	Ֆինանսա-վորման աղբյուրները
16.	Բռնի տեղահանված և տեղահանման վտանգի տակ գտնվող կանանց հոգեբանական և իրավաբանական աջակցության ցուցաբերում	Կարիքների գնա-հատում (իրակա-նացվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հար-ցերի նախարարի 25.01.2017 N 6-Ա/1 հրամանի հիման վրա) Վերականգնման, (ներառյալ՝ հոգե-բանական) և ինտեգրման ծրագրերի մշակում և իրականացում Ռեաբիլիտացիայի և ինտեգրման ծառայություն-ների տրամադրում և որակի բարելա-վում	Տեղահանված և տեղահանման վտանգի տակ գտնվող կանանց և աղջիկների կարիքների գնահատում և համապատաս-խան ինտեգրման պլանի մշակում ու ներդրում	2022-2024	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարության միգրացիոն ծառայություն	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն Միջազգային կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

17.	Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներգործությանը, այդ թվում՝ 2016, 2020 թթ. ուժի կիրառմանը ենթարկված բնակավայրերում գտնվող կանանց և աղջիկների սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանության ապահովում, ընդգրկելով նաև 1988-1992 թթ. Ադրբեջանից տեղահանված և Լեռնային Ղարաբաղում ապաստանած կանանց	Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներգործությանը ենթարկված կանանց և աղջիկների համար սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացում Տնտեսական ինտեգրման ծրագրերում կանանց հասանելիության ապահովում Բարենպաստ միջավայրի ստեղծում և աշխատաշուկայում կանանց մրցունակության բարձրացում	Սոցիալ-տնտեսական ծրագրերի վերանայում Հակամարտության ազդեցությունը կրած կանանց ներգրավում կանանց ռեսուրս-կենտրոնների կողմից իրականացվող ծրագրերում, Միջավայրի ադապտացում և աշխատատեղերի ավելացում	2022-2024	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն Տեղական ինքնակառավարման մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Տեսչական մարմին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

5. Համագործակցություն (Cooperation)

NN ը/կ	Նպատակը	Միջոցառումները	Արդյունքային ցուցանիշները	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողները	Համակատարող-ները	Ֆինանսավորման աղբյուրները
18.	1325 ծրագրի շրջանակում բոլոր տեղական հարթակների համագործակցության ապահովում	Համագործակցության խթանում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ, փորձի փոխանակում	Համատեղ այցելությունների և իրականացված ծրագրերի թվի ավելացում	2022-2024	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	1325 հանձնաժողովի անդամ բոլոր կառույցներ Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
19.	Համագործակցության ապահովում 1325 գործողությունների ազգային ծրագիր ունեցող երկրների և շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ու կանանց հարցերով զբաղվող հիմնադրամների հետ	Երկկողմ այցեր, փորձի փոխանակում, փորձագետների ներգրավում Համատեղ համաժողովների անցկացում Համաշխարհային լավագույն փորձի կիրառում	Գիտելիքների ամրապնդում Միջազգային հարթակներում ՀՀ դիրքի ամրապնդում	2022-2024	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	1325 հանձնաժողովում ներգրավված բոլոր կառույցներ Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Միացում 1325 տարածաշրջա-նային և միջազ-գային ցանցերին					
20.	Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և համագործակցության հաստատում՝ պաշտ-պանության ոլորտում կանանց մասնակցու-թյունը խթանելու նպա-տակով, ընդգրկելով նաև 1988-1992 թթ. Ադրբեջանից տեղա-հանված և Լեռնային Ղարաբաղում ու Հայաստանի Հանրա-պետությունում ապաս-տանած կանանց	Առաջատար երկրների փորձի ուսումնասիրում, այցերի կազմա-կերպում, Կանայք, խաղա-ղություն, անվտան-գություն թեմայով զբաղվող միջազ-գային կառույց-ների հետ համագործակցու-թյուն	Ձեռք բերված գիտելիքների և ուսումնասի-րությունների արդյունքում առաջարկների մշակում և ներկայացում	2022-2024	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	ՀՀ արտաքին գործերի նախարարություն Միջազգային կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
21.	Լեռնային Ղարաբաղի իշխանությունների և հասարակական կազ-մակերպությունների հետ Միավորված ազգերի կազմակեր-պության Անվտանգու-թյան խորհրդի 1325 և հարակից բանաձևերի իրականացման ուղղու-	Պարբերական խորհրդակցու-թյունների և թեմատիկ քննարկումների կազմակերպում, այդ թվում՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ	Ապահովել խորհրդակցու-թյունների և թեմատիկ քննարկումների քանակ	2022-2024	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ շահագրգիռ գերատեսչություններ Միջազգային կազմակեր-պություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակեր-պություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակեր-պությունների ֆինանսական միջոցներ

	թյամբ համագործակցության և փորձի փոխանակման ապահովում						Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
22.	Համագործակցության հաստատում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի ցեղասպանությունների կանխարգելման գրասենյակի հետ	Միավորված ազգերի կազմակերպության փորձի ուսումնասիրում կանանց և աղջիկների զանգվածային ոճրագործություններից կանխարգելման և պաշտպանության հարցերով	Ներգրավում վաղ կանխարգելման, խաղաղապահ առաքելությունների, զոհերի պաշտպանության, արդարադատության և հատուցման հարցերին նվիրված միջազգային քննարկումներին	2022-2024	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ շահագրգիռ գերատեսչություններ Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ և հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

6. Մոնիթորինգ և գնահատում (Monitoring and Assessment)

1325 բանաձևի իրականացումն ապահովող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից տարեկան հաշվետվությունների ներկայացում: Հանձնաժողովի անդամ հանդիսացող գերատեսչություններից և հասարակական կազմակերպություններից (նպատակահարմարության պարագայում ներգրավելով միջազգային փորձագետների) աշխատանքային խմբի ձևավորում՝ ներկայացված հաշվետվությունները գնահատելու և կատարված աշխատանքի արդյունավետության վերաբերյալ գնահատական ներկայացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

02.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ